

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ԲՆԱԳՐԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈԴՈՒԼ	ԲՆԱԳՐԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ ԵՎ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1708B4/20
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	4-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ	<p>Դասընթացի նպատակն է երկու այլ առարկաներից <<Գրականության տեսությունից>> և <<Հայ գրաքննադատության պատմությունից>> ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու և դրանց կիրառման հնտությունը ստուգելու համար; Վերլուծվում են տարբեր գրական մեթոդներով և տարբեր գրական սեռերով ստեղծված ստեղծագործություններ:</p> <p>Առարկայի դասընթացն անցնելուց հետո ուսանողը պետք է ունենա այնպիսի գիտելիքներ, որոնց շնորհիվ պետք է կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> 1.Տրված բնագիրը գրականագիտորեն վերլուծել և հիմնավորել, թե ինչու է այդպես վերլուծում: 2. Գրականագիտական բնագրագիտական վերլուծման կարողությունը փոխանցել ավագ դպրոցի աշակերտներին:
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<p>ԳԻՏԵԼԻՔ</p> <p>Բացատրել թե ինչպիսի սկզբունքներով է անհրաժեշտ գրականագիտական վերլուծության ենթարկել տվյալ բնագիրը, այսինքն՝ տարբեր սեռերով ու ժանրերով, ստեղծագործական մեթոդներով ստեղծված գրական երկերը:</p> <p>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ</p> <p>Քննել բնագրի գրականագիտական վերլուծության հիմնական սկզբունքների առանձնահատկությունները:</p> <p>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ</p> <p>Նախընտրել հատկապես ավագ դպրոցի աշակերտներին գրականագիտական, բնագրագիտական վերլուծման կարողությունը փոխանցելու ունակությանը:</p>
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ	<ul style="list-style-type: none"> • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 2 • ԼՍԱՐԱՆԱՅԻՆ -20 • ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 2
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ	Նախնական գիտելիքներ յուրացրած գրականության տեսություն, գրականության դասավանդման մեթոդիկա և հայ ու արտասահմանյան գրականությունների պատմություն առարկաներից

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Դասախոսություն, գրույց, իլյուստրացիա, բանավեճ տեսադիտումներ, սեմինար, հարց ու պատասխան ինքնուրույն և խմբային աշխատանք

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- Դասընթացի առարկան և խնդիրները: Բնագրի կամ գրական երկի վերլուծության նախապատրաստական փուլը: Գրականագիտական վերլուծության հիմնական սկզբունքները: Գրական երկի վերլուծության նախնական փուլը: Գրական երկի գրականագիտական վերլուծության հիմնական սկզբունքները:
- Գրական երկի բովանդակության բաղադրիչները: Հավերժական թեմաներ: Արքետիպեր:
- Գրական երկի գաղափարը: Գաղափարի և թեմայի միասնությունը:
- Գրական-գեղարվեստական պատկերի առանձնահատկությունները: Պատկերավոր մտածողության առանձնահատկությունները: Ստեղծագործական աշխատանք: Մտահղացում: Ոգևորություն և աշխարհաճանաչողության ներքին տրվածք: Ստեղծագործական երևակայություն:
- Գրական երկի գեղարվեստական ձևի բաղադրիչները: Կառուցվածքը: Դիպաշարի բաղադրիչները. տեսակները: Կոմպոզիցիա և դիպաշար (սյուժե): Ինտրիգ և Կոլիզիա:
- Բնագրի կամ գրական երկի ներքին ձևի առանձնահատկությունները: Գրողի բառապաշարի շերտերը:
- Տարբեր գրական սեռերով ստեղծված երկերի գրականագիտական վերլուծության առանձնահատկությունները: Գեղարվեստականության չափանիշները: Գրական տեսակներ/ժանրեր/: Գրական երկի գնահատման չափանիշները:
- Գրական երկի վերլուծությունն ըստ ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունների: Գրական մեթոդի առանձնահատկությունները: Մեթոդը որպես գեղարվեստական համակարգ: Մեթոդների դրսևորման բազմազան ձևերը: Կլասիցիզմի ուսուցումը: Կլասիցիզմը հայ գրականության մեջ: Ռոմանտիզմի ուսուցումը: Ռոմանտիզմը հայ գրականության մեջ: Ռեալիզմի ուսուցումը: Ռեալիզմը հայ գրականության մեջ: Սիմվոլիզմի ուսուցումը: Սիմվոլիզմը հայ գրականության մեջ: Ֆուտուրիզմ: Ֆուտուրիզմը հայ գրականության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԿԱՆ

1. Ավետիսյան Զ., Գրականության տեսություն, Ե., 1988:
2. Գրական ստեղծագործության վերլուծության ուղիները և սկզբունքները, Ե, 1983:
3. Զրբաշան Էդ., Գրականագիտության ներածություն, Ե, 1996:
4. Զրբաշան Էդ., Գրականության տեսություն, Ե, 1980:

ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տաղաչափություն /մետրիկա/, //Երկեր, հ. Ե., 1971:
2. Արիստոտել, Պոետիկա, Ե., 1955:
3. Բորն Յու., Գեղագիտություն, Ե, 1982
4. Բեքմեզյան Ա., Վիպակի ժանրը հայ նոր գրականության մեջ, Ե, 1984:
5. Բուալո Ն., Քերթողական արվեստ, Ե., 1980:
6. Գասպարյան Դ., Հայ գրականություն: Մեթոդական ձեռնարկ, Ե., 2000:
7. Գասպարյան Դ., Հայ գրականություն: Մեթոդական ձեռնարկ, գիրք 2, Ե., 2002:
8. Գասպարյան Մ., Գրականության տեսության ուսուցումը հանրակրթական դպրոցի միջին և ավագ դասարաններում, Ե,



2003:

9. Գրական ժանրեր: Պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը, Ե.,1973:

10. Թադևոսյան Մ. Հայկական կլասիցիզմի տեսություն, Ե.,1977:

11. Լեսինգ Գ., Լաոկոոն, Ե.,2002:

12. Ջրբաշյան Էդ., Պոետիկայի հարցեր, 1976:

13. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Ե., 2006:

14. Սահակյան Ռ., գեղագիտական հիմնական կատեգորիաները, Ե., 2002:

15. Տեն Հ., Գեղարվեստի փիլիսոփայությունը, Ե., 1939:

16. Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Ե., 2008:

ՄՏՈՒԳՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Եզրափակիչ ստուգումը գրավոր ամփոփիչ ստուգում 100 միավոր առավելագույն արժեքով: Քննական հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 30, 30, 40 միավորային արժեքով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1 10 % /հաճախումներ/
2. Բաղադրիչ 2 70% /ամփոփիչ ստուգում/
3. Բաղադրիչ 3 20% /ընթացիկ ակտիվություն/

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A_	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B_	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C_	3-
Մինչև 39	D	2

Ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակը- կրեդիտ/կրեդիտ ժամ- 2/60

Հ/Հ	Թեմա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	Սեմինար	Ուս. պրակտիկա		
1.	Բնագրի գրականագիտական վերլուծության նախապատրաստական փուլը և հիմնական սկզբունքները:	2					3	5
2.	Գրական երկի բովանդակության բաղադրիչները: Հավերժական թեմաներ: Արքետիպեր:	2					3	5
3.	Գրական երկի գաղափարը: Գաղափարի և թեմայի միասնությունը:	2					3	5
4.	Գրական-գեղարվեստական պատկերի առանձնահատկությունները: Ստեղծագործական աշխատանք:	2					3	5
5.	Գրական երկի գեղարվեստական ձևի բաղադրիչները:	2					3	5
6.	Բնագրի երկի ներքին ձևի առանձնահատկությունները: Գրողի բառապաշարի շերտերը:	2					3	5
7.	Տարբեր գրական սեռերով և ժանրերով երկերի գրականագիտական վերլուծությունը: Գեղարվեստականության չափանիշները:	2					3	5
8.	Գրական երկի վերլուծությունն ըստ ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունների	2					3	5
9.	Բնագրի վերլուծության նախապատրաստական փուլը: Բովանդակության և ձևի առանձնահատկությունները		2				3	5
10.	Գրական երկի վերլուծությունն ըստ ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունների:		2				3	5
Ամփոփիչ ստուգում								3
Ընդամենը								63